ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի 2022թ-ի դեկտեմբերի 9-ի խորհրդի թիվ 06/22 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝ Սերգեյ Շևչենկո

«ՓՐԱՅՄ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ
(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ 2022

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն Կանոնները սահմանում են «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց դրամական միջոցները և/կամ արժեթղթերը հավատարմագրային կառավարման (այսուհետ՝ ՀԿ) վերցնելու կարգը:
2. Սույն կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան:
3. «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը (այսուհետ նաև՝ հավատարմագրային կառավարման գործունեություն) իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով սահմանված կարգով:
4. Սույն Կանոններով նախատեսված դրամական միջոցները և/կամ արժեթղթերը հավատարմագրային կառավարման վերցնելը չի հանգեցնում դրանց սեփականության իրավունքի փոխանցմանը Ընկերությանը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն կանոններում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

2.1. **Ընկերություն**՝ "Փրայմ Կապիտալ" ՍՊԸ:

2.2. **Հաճախորդ**՝ անձ, որի հետ Ընկերությունը նախատեսում է կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր կամ որը հանդիսանում է հավատարմագրային կառավարման հիմնադիր:

2.3. **Հավատարմագրային Կառավարիչ**՝ Ընկերություն, որն, առաջնորդվելով գործող օրենսդրությամբ և իրավական ակտերով, հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակներում իրականացնում է որոշակի ժամկետով իրեն հանձնված ակտիվների հավատարմագրային կառավարում:

2.4. **Արժեթղթերի փաթեթի կառավարում (Հավատարմագրային Կառավարում)՝** հավատարմագրային կառավարչի կողմից իր տիրապետմանը հանձնված կառավարման հիմնադրին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումը՝ կառավարման հիմնադրի կողմից տրված ցուցումների համաձայն:

2.5. **Պրոֆեսիոնալ հաճախորդ՝** հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիքներ ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար:

2.6. **Պայմանագիր՝** հավատարմագրային ծառայություններից օգտվելու համար կառավարման հիմնադրի հավատարմագրային կառավարչի միջև կնքված փաստաթուղթ, որը կարգավորում է կառավարման հիմնադրի արժեթղթերի և դրամական միջոցների հավատարմագրային կառավարման կապակցությամբ կողմերի իրավահարաբերությունները, սահմանում նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բովանդակում օրենքով և կողմերի համաձայնությամբ որոշված այլ պայմաններ:

2.7. **Ներդրումային հայտարարագիր՝** Կառավարման հիմնադրի և Հավատարմագրային կառավարչի միջև կնքված պայմանագրի շրջանակներում հավատարմագրային կառավարման օբյեկտ հանդիսացող դրամական միջոցների ներդրման ուղղությունները, պայմաններն ու կարգը, այդ թվում՝ ներդրման կառուցվածքը և սահմանափակումները սահմանող փաստաթուղթ: Հայտարարագրում ներկայացվում են նաև արժեթղթերի գնահատման մեթոդները, հավատարմագարային կառավարման արդյունավետության գնահատման համար իմաստալից հենանիշը, ինչպես նաև այլ դրույթներ: Ներդրումային հայտարարագրի ստորագրմամբ՝ Կառավարման հիմնադիրը տալիս է Գույքի կառավարման համար անհրաժեշտ ցուցումները:

2.8. **Հավատարմագրային կառավարման օբյեկտ՝** արժեթղթեր և դրամական միջոցներ, որոնք հանձնվել են հավատարմագրային կառավարման, ինչպես նաև բոլոր այն արժեթղթերը և դրամական միջոցները, որոնք Հավատարմագրային կառավարչի կողմից ձեռք են բերվել՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության շրջանակում:

2.9. **Դեպո հաշիվ՝** Կենտրոնական Դեպոզիտարիայի կամ այլ պահառուների հաշվառման համակարգում ընդհանուր չափանիշներով միավորված գրառումների համախումբ, որը նախատեսված է արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման համար:

2.10. **ՀԿ աշխատակից (Հավատարմագրային կառավարման աշխատակից կամ արժեթղթերի փաթեթի կառավարիչ)՝** Ընկերության աշխատակից, որն ունի նշված գործունեություն իրականացնելու համապատասխան որակավորում:

2.11. **Հաշվետու ժամանակաշրջան՝** Եռամսյակ, այսինքն՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կողմերի համար առաջին հաշվետու եռամսյակ է համարվում հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված Ընդունման / հանձնման ակտ ստորագրելու օրվանից մինչև տվյալ եռամսյակի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.12. **«Ֆինանսական Լծակ»՝** Պարտավորության և Գույքի Զուտ Արժեքի հարաբերակցությունն է, որի առավելագույն մակարդակը սահմանվում է հավատարմագրային կառավարման պայմանագրին կից Ներդրումային հայտարարագրով:

2.13. **«Գույքի Սկզբնական Արժեք»՝** Հավատարմագային կառավարմանը հանձնելու օրվա դրությամբ արժեթղթերի և (կամ) արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Արտարժույթով արտահայտված ակտիվները հաշվարկին մասնակցում

են ՀՀ կենտրանական բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված միջին փոխարժեքներին համարժեք:

2.14. **«Գույքի Արժեք»՝** Հավատարմագային կառավարմանը հանձնելու օրվանից բացի որևէ այլ օրվա դրությամբ հաշվարկված Գույքի արժեքն է՝ արտահայտված ՀՀ դրամով:

2.15. **«Գույքի Զուտ Արժեք»՝** Հավատարմագրային կառավարմանը հանձնելու օրվանից բացի որևէ այլ օրվա դրությամբ հաշվարկված Գույքի արժեքի և Պարտավորության տարբերությունն է:

2.16. **Գույքի Բազիսային** Արժեքը՝ դա այն Գույքի Զուտ Արժեքն է, որի արդյունքում իրականացվել է պարգևավճարի ամենավերջին գանձումը, նոր Կառավարման հիմնադրի համար սկզբնական ԳԲԱ-ն դա հավատարմագրային կառավարման հանձնված ակտիվների առաջնային մուտքն է՝ համաձայն Ընդունման/Հանձնման ակտի:

2.17. Սույն կանոններում և դրա հավելվածներում օգտագործված այլ հասկացություններն ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

3.1. Հաճախորդի դրամական միջոցների և/կամ արժեթղթերի ՀԿ-ն Ընկերության կողմից կարող է իրականացվել՝

1. Ընկերության կողմից առաջարկված ՀԿ ռազմավարության կիրառմամբ,
2. Յուրաքանչյուր հաճախորդի համար մշակվող անհատական ռազմավարության կիրառմամբ:

3.2. *ՀԿ ծառայությունների ներկայացում*

Ընկերության կողմից հաճախորդին տրամադրվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ գովազդային նյութերի տեղեկատվությունը) պետք է լինի պարզ, անկողմնակալ և չլինի ապակողմնորոշիչ:

ՀԿ ծառայություններով Հաճախորդի հետաքրքրվածության դեպքում ՀԿ աշխատակիցը Հաճախորդին համառոտ ներկայացնում է ՀԿ ծառայություններն ու դրանց տեսակները, պայմանները, սակագները, կառավարման հանձնվող միջոցների նվազագույն ծավալի նկատմամբ Ընկերության պահանջները, հնարավոր ռիսկերի, արժեթղթերի ու թողարկողների մասին տեղեկություններ, ինչպես նաև տեղեկություններ Ընկերության գործունեության մասին:

3.3. *Հաճախորդի մասին տեղեկատվություն*

Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման դեպքում Ընկերությունը հաճախորդից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին, որը հնարավորություն կտա հաճախորդին առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են հաճախորդի ցանկությանը: Նշված տեղեկատվությունը չստանալու դեպքում Ընկերությունն իրավունք չունի հաճախորդին հորդորել որևէ արժեթղթում ներդրում կատարել:

Ֆինանսական վիճակի մասին տեղեկությունները ներառում են՝ հաճախորդի կանոնավոր եկամտի աղբյուրները և մեծությունը, ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները, ֆինանսական ներդրումները և անշարժ գույքի մասին տեղեկություններ:

Ներդրումային նպատակների մասին տեղեկությունները ներառում են՝ ներդրումների պահպանման ժամանակահատվածը, ռիսկերի նկատմամբ իր նախապատվությունը և դրանց շրջանակը, կատարվող ներդրման նպատակը:

Ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկությունները ներառում են՝ հաճախորդների կողմից կատարված արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին տեղեկատվությունը, հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը, ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում

կատարվել են այդ գործարքները, հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:

Նշված տեղեկատվության ստացման նպատակով Հաճախորդը լրացնում է հարցաթերթիկ (Հավելված 1):

Ընկերությունը կարող է համարել, որ պրոֆեսիոնալ հաճախորդներն ունեն այդ անհրաժեշտ գիտելիքները և փորձը:

Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում վերը նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը զգուշացնում է հաճախորդին այն մասին, որ հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են հաճախորդի ցանկությանը: Այդ զգուշացումը ներկայացվում է հաճախորդներին էլեկտրոնային փոստի միջոցով:

Հաճախորդը Ընկերության ՀԿ աշխատակցի հետ համատեղ որոշում է ռիսկի ընդունելի աստիճանը, համապատասխան որի հետագայում ձևավորվում և կառավարվում է նրա արժեթղթերի փաթեթը: Ռիսկի ընդունելի աստիճանը որոշելու նպատակով՝ Ընկերությունը տեղեկացնում է Հաճախորդին արժեթղթերում ներդրումներ կատարելիս ուղեկցվող ռիսկերի (Հավելված 2) և դրանք նվազեցնելու հնարավորությունների մասին:

Հաճախորդից կարող է պահանջվել հավատարմագրային կառավարման հանձնված գույքի ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ հայտարարագիր (Հավելված 3):

3.4. *Հաճախորդի դասակարգում*

Համաձայն «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակագի և Ընկերության «Պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների դասակարգման չափանիշները կարգավորող» կանոնակարգի պահանջների՝ նախքան Հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքումը և հավատարմագրային կառավարման ծառայության մատուցումը Ընկերությունը դասակարգում է հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հավատարմագրային կառավարման մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

Եթե Հաճախորդը բավարարում է պրոֆեսիոնալ դասակարգվելու չափանիշներին, ապա Ընկերությանը տալիս է համապատասխան գրավոր հայտարարություն այն մասին որ.

1. համաձայն է դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ՝ տվյալ ծառայության կամ գործարքի մասով,
2. տեղյակ է, որ որևէ ծառայության կամ որևէ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իր նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով նա կորցնում է որոշակի պաշտպանվածություն:

Ընկերությունը իր և հաճախորդի միջև կնքվող պայմանագրում պարտադիր կերպով ներառում է դրույթ, որի համաձայն նշվում է, որ եթե պրոֆեսիոնալ համարվող

հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել Ընկերությանը՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:

Պրոֆեսիոնալ համարվող հաճախորդները պարտավոր են Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Ընկերությունը անհապաղ դադարեցնում է հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հաճախորդին:

Հաճախորդին որպես որակավորված ներդրող դասակարգելու դեպքում, նրա նկատմամբ կկիրառվեն ՀՀ ԿԲ «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման» կարգի 4/06 պահանջները:

3.5. *Սակագների ներկայացում և հաճախորդի որոշման կայացում*

ՀԿ աշխատակիցը, շարունակելով ՀԿ գործընթացի սկզբնական փուլը, Հաճախորդին առավել մանրամասն ներկայացնում է սակագները (Հավելված 6), որից հետո հաճախորդը վերջնական որոշում է կայացնում ՀԿ ծառայությունից օգտվելու վերաբերյալ: Դրական որոշման դեպքում անցում է կատարվում գործընթացի հաջորդ փուլին, իսկ բացասական որոշման դեպքում գործընթացն ավարտվում է այս փուլում:

Սակագների փոփոխության դեպքում Ընկերությունը պարտավոր է փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օր առաջ այդ մասին նախապես ծանուցել հաճախորդին:

3.6. *Ռազմավարության ընտրություն և ներդրումային հայտարարագրի կազմում*

Հաճախորդը, Ընկերության հավատարմագրային կառավարման ծառայությունների օգտվելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, Ընկերության հետ միասին ընտրում է որոշակի ռազմավարություն: Հաճախորդի կողմից ռազմավարության ընտրությունից հետո՝ ՀԿ աշխատակիցը կազմում է ներդրումային հայտարարագիր (Հավելված 4), որը ենթակա է հաստատման Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Ընկերության Գործադիր տնօրենը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հաստատում է Ներդրումային հայտարարագիրը կամ տալիս եզրակացություն՝ նշելով իր առարկությունները: Դրական որոշման դեպքում անցում է կատարվում գործընթացի հաջորդ փուլին, իսկ բացասական որոշման դեպքում՝ վերադարձ ներդրումային հայտարարագրի կազմման փուլին:

3.6. *Իմաստալից հենանիշի սահմանումը*

Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման դեպքում Ընկերությունը պետք է առաջարկի այնպիսի մեթոդ, որը հաճախորդին հնարավորություն կընձեռի գնահատել և որևէ իմաստալից հենանիշի հետ համեմատել կառավարման արդյունավետությունը: Հաճախորդը տեղեկացվում է, որ արժեթղթերի փաթեթի գնահատման հիման վրա հաշվարկված եկամտաբերությունը համեմատվելու է իմաստալից հենանիշի հետ: Ներդրումային հայտարարագրում հաճախորդի հետ համաձայնեցվում են իմաստալից հենանիշի կառուցման և ներկայացման սկզբունքները: Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման դեպքում եկամտաբերության որևէ երաշխավորված մակարդակի խոստանալն արգելվում է:

Իմաստալից հենանիշը պետք է բավարարի հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա հաճախորդին համեմատել կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են հաճախորդի կողմից նշված սահմանափակումներին,

2) չպետք է հիմնվի տվյալ կառավարչի՝ անցյալում ձեռք բերված եկամտաբերության կամ տվյալ կառավարչի ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա:

Հաճախորդը տեղեկացվում է արժեթղթերի փաթեթի արժեքի գնահատման մեթոդի և հաճախականության մասին: Արժեթղթերի փաթեթի գնահատման սկզբունքները սահմանված են Ներդրումային հայտարարգրում, իսկ պարբերականությունը՝ հաճախորդի հետ կնքված հավատարմագրային կառավարման պայմանագրում նշված հաճախականությամբ:

3.7. *Պայմանագրի կնքում*

Մինչև հավատարմագրային կառավարման մատուցման պայմանագիր կնքելը Ընկերությունը հաճախորդին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի «Արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող կանոններին», «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող» և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» կանոնակարգերին:

Պայմանագիրը սահմանում է՝

1) կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

2) ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,

3) հաճախորդներին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,

4) հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,

5) պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը,

6) կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,

7) պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձին առնվազն 10 աշխատանքային օր առաջ տեղեկացնելու պայմանով,

8) պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը

9) գործարքին բնորոշ այլ առանձնահատուկ պայմանները:

Հաճախորդի և Ընկերության միջև կնքվում է Պայմանագիր, որի անբաժանելի մասն են կազմում Ներդրումային հայտարարագիրը և Ռիսկերի մասին հայտարարագիրը: Ռիսկերի մասին հայտարարագրում Հաճախորդը գրավոր ձևով տեղեկացվում է դրամական միջոցների և/կամ արժեթղթերի ՀԿ ռիսկերի մասին (Հավելված 2):

3.8. Հավատարմագրային հաշվի բացում

Պայմանագրի հիման վրա, հավատարմագրային կառավարման գործընթացի իրականացման նպատակով՝ Հաճախորդը ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների՝ պահառուի (բանկեր, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ տնտեսավարող սուբյեկտներ) մոտ բացում է արժեթղթերի հաշվառման համապատասխան հաշիվներ:

Հաճախորդը լիազորում է Ընկերությանը կառավարել պահառուի մոտ բացված իր հաշիվները՝ տալով համապատասխան գրավոր համաձայնություն Պահառուին: Հաճախորդի և պահառուի միջև արժեթղթերի հաշվառման հաշիվների բացման պայմանագրում ամրագրվում է, որ պահառուն քաղվածքները և հաշվետվությունները տրամադրում է նաև Ընկերությանը:

ՀԿ գործընթացի իրականացման նպատակով՝ Ընկերությունը կարող է անձամբ կնքել համապատսխան հաշվի բացման պայմանագիր ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց մոտ հաճախորդների ակտիվների կառավարման համար: ՀԿ գործընթացի իրականացման նպատակով վերոնշյալ հաշվի բացման մեկ այլ տարբերակ է հաճախորդի, Ընկերության եւ

ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց միջև կնքած եռակողմ պայմանագիրը:

Հաճախորդների դրամային միջոցները (ՀԿ պայմանագրի շրջանակում) հաշվառվում են Ընկերության կողմից ՀԿ նպատակով բացված բանկային հաշվում:

Ընկերությունն իրականացնում է Հաճախորդների դրամական միջոցների առանձնացված ներքին հաշվառում:

Այնուհետև, Ընկերության և Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հիման վրա Ընկերությունը հավատարմագրային կառավարման է ընդունում հանձնվող ակտիվներ՝ ստորագրելով ակտիվների Ընդունման/Հանձնման ակտ (Հավելված 5):

3.9. Արժեթղթերի փաթեթի կառավարման գործընթացի կազմակերպման փուլերը

ՀԿ շրջանակներում ակտիվների կառավարումն իրականացվում է հետևյալ փուլերով.

- Ընկերությունը հասանելի հետազոտական նյութերից և ռազմավարական գործընկերներից ստանում է գլոբալ շուկայական վերլուծություն,
- Իրականացում են ֆինանսական շուկաների և առանձին թողարկողների վերլուծություն,
- Հաշվարկվում են եկամտաբերությունն ու ռիսկերը,
- Գնահատվում և կանխատեսվում են առանձին թողարկողների վերաբերյալ ողջ շուկայական տեղեկատվությունը, տրվում է կանխատեսված եկամտաբերության ու ռիսկերի մակարդակի մասին եզրակացություն,

Հիմնվելով վերոնշյալ վերլուծությունների վրա և ելնելով արժեթղթերի փաթեթի կառավարման ռազմավարությունից, որը նախապես համաձայնեցվել է Հաճախորդի (հավատարմագրային կառավարման հիմնադիր) հետ և ներառվել ներդումային հայտարարագում՝ ՀԿ աշխատակիցը կազմում է արժեթղթերի փաթեթի կառուցվածքը և հաշվարկելով փաթեթում ընտրված յուրաքանչյուր արժեթղթի օպտիմալ մասնաբաժինը՝ ձևավորում է արժեթղթերի փաթեթը:

Կազմված արժեթղթերի փաթեթը ենթակա է հաստատման Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Դիտողությունների առկայության դեպքում արժեթղթերի փաթեթի կառուցվածքը վերանայվում է և անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան փոփոխություններ:

Ընկերության գործադիր տնօրենի կողմից արժեթղթերի փաթեթի հաստատումից հետո, ՀԿ աշխատակիցը արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթերի վերաբերյալ կազմում է ներդրումային որոշումներ: ՀԿ աշխատակիցը գրանցում է ներդրումային որոշումները էլեկտրոնային գրանցամատյանում, որը ներառում է ՀՀ ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 Կանոնակագի Գլուխ 14-ի բոլոր պահանջները:

ՀԿ աշխատակիցը կազմում և հաղորդում է հանձնարարականները Ընկերությանը սպասարկող բրոքերներին՝ ի կատարումն: Ինչպես նաև, գործադիր տնօրենի ստորագրմանն է ներկայացնում գործընկերների հետ կնքված այն

պայմանագրերը, որոնք անհրաժեշտ են հավատարմագրային կառավարման նպատակով իրականացվող գործարքների կատարման համար:

3.10. Հաշվետվությունների ներկայացումը

3.10.1. *Հաշվետվությունների ներկայացումը հաճախորդներին:* Ընկերությունը Պայմանագրում նշված հուսալի կապի միջոցով (էլեկտրոնային փոստի հասցե) եռամսյակային պարբերականությամբ հաճախորդին ներկայացնում է հաշվետվություն, որը առնվազն ներառում է՝

1) ներդրումային ծառայություն մատուցող անձի անվանումը,

2) հաճախորդի արժեթղթերի կառավարման նպատակով բացված հաշվի նույնականացնող համարը,

3) հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում՝

ա. փաթեթում ընդգրկված արժեթղթերի ցանկը և փաթեթի արժեքը, ներառյալ փաթեթում ընդգրկված յուրաքանչյուր արժեթղթի իրական արժեքը,

բ. հաճախորդի դրամական միջոցների հաշվեկշիռը,

4) արժեթղթերի փաթեթի տարեկան եկամտաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում,

5) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գանձվող վճարները՝ տալով դրանց բացվածքը առնվազն ըստ կառավարման դիմաց գանձվող վճարի և գործարքների կնքման համար կատարված ծախսերի,

6) կառավարման եկամտաբերության համեմատումը հաճախորդի հետ նախապես համաձայնեցված հենանիշի հետ

7) հաշվետու ժամանակաշրջանում արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով ստացված շահութաբաժինները, տոկոսները և այլ վճարները,

8) արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով կորպորատիվ գործողությունները (արժեթղթերի փոխարկումը՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բաժանման, կոնսոլիդացիայի կամ թողարկողի վերակազմակերպման արդյունքում),

9) հաշվետու ժամանակաշրջանում արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում կնքված գործարքների մասին:

Եթե հաճախորդը նախընտրել է ստանալ փաթեթի կառավարման մասին հաշվետվություն՝ ըստ յուրաքանչյուր գործարքի, ապա հաճախորդի գրավոր պահանջի հիման վրա, Ընկերությունը տրամադրում է նաև այդ հաշվետվությունը ոչ ուշ, քան գործարքի կատարմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

3.10.2.*Հաշվետվությունների ներկայացումը Գործադիր տնօրենին:* ՀԿ աշխատակիցներն առնվազն եռամսյակային պարբերականությամբ պատրաստում և գործադիր տնօրենին են ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանի ընթացում հավատարմագրային կառավարման հաճախորդների մուտքերը և ելքերը, կատարված գործարքները, արժեթղթերի փաթեթի կառավարման և կառուցվածքի մասին հաշվետվությունները:

3.10.3. Հաշվետվությունների ներկայացումը հաշվապահական հաշվառումը վարող կազմակերպությանը: Ընկերությունը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Ընկերության հաշվապահական հաշվառումը վարող կազմակերպությանն է տրամադրում հավատարմագրային կառավարման շրջանակներում իրականացված գործարքների փաստաթղթային հիմքերը, դրամական և արժեթղթերի հաշիվների քաղվածքների սքանավորված կամ էլեկտրոնային, իսկ ահրաժեշտության դեպքում նաև թղթային տարբերակները: Գործարքների փաստաթղթային հիմքերի, դրամական և արժեթղթերի հաշիվների քաղվածքների ներկայացման ձևը և կարգը կարգավորվում է հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերության և Ընկերության միջև կնքված պայմանագրով:

3.10.4. *ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները:* Հաշվապահական հաշվառմանը վերաբերող հաշվետվությունները կազմում է հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունը, իսկ ֆինանսական գործարքներին վերաբերող տեղեկատվությունը հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությանը տրամադրվում է Ընկերության կողմից:

3.11. Պայմանագրի դադարեցում

Հաճախորդը կարող է պայմանագրի գործողության ժամկետի վաղաժամկետ դադարեցման, փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև ակտիվների վերադարձի պահանջի մտադրության մասին Ընկերությանը հայտնել առնվազն 10 օր առաջ:

Ներդրումային միջավայրի կտրուկ փոփոխության դեպքում Ընկերությունը Հաճախորդին տեղեկացնում է այդ մասին, որպեսզի հաճախորդը որոշում կայացնի դադարեցնել կամ շարունակել ՀԿ պայմանագիրը:

Եթե Հաճախորդը որոշում է դադարեցնել պայմանագիրը, ապա Ընկերությունը փակում է ՀԿ պայմանագրի շրջանակներում բացված բոլոր դիրքերը՝ իրականացնելով վերջնահաշվարկ և Հաճախորդին վերադարձնելով ակտիվները 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն երկկողմանի կնքված ակտիվների Ընդունման/Հանձնման ակտի (Հավելված 5):

Ընկերությունը վերջնահաշվարկից հետո Հաճախորդին տալիս է համապատասխան հաշվետվություններ:

Հավելված 1.

Փրայմ Կապիտալ ՍՊԸ

Հաճախորդի հարցաթերթիկ

Հաճախորդի ԱԱՀ (Իրավաբանական անձի դեպքում՝ պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող ֆիզիկական անձ)
Հասցե՝
Ծննդյան տարեթիվ՝
Քաղաքացիություն՝
Կրթություն (գիտական աստիճան/մասնագիտացում)՝
Գործունեության ոլորտ (կազմակերպություն/պաշտոն/կապի միջոցներ)՝
Կապի միջոցները (հեռախոս, էլ. փոստ և այլն)՝

1. Ի՞նչ տիպի ինվեստիցիոն/ներդրումային հաշիվներ Դուք ունեք

☐ չունեմ

☐ բրոքերային հաշիվ

☐ հավատարմագրային հաշիվ

☐ այլ ինվեստիցիոն տիպի հաշիվ՝ խնդրում ենք նկարագրել

_____

2. Ո՞ր երկրներում ունեք ներդրումներ իրականացնելու փորձ

☐ Հայաստան

☐ Ռուսաստան

☐ Այլ ԱՊՀ երկրներ

☐ Եվրոպա

☐ ԱՄՆ

Նշումներ _____

3. Ի՞նչ հաճախականությամբ եք Դուք օգտվում մասնագիտացված խորհրդատուներից՝ կապված Ձեր ներդրումների կառավարման հետ

☐ Եռամսյակը մեկ ամգամ

☐ Ընդամենը մի քանի անգամ

☐ Տարին մեկ անգամ

☐ Չեմ օգտվել

4. Ձեր գիտելիքները կապիտալ շուկայի վերաբերյալ

☐ Ցածր – սահմանափակ ներդրումային փորձ, ներառյալ ընդհանուր բանկային գործարքներ, ներդրումային հավաստագրեր կամ ընդհանուր հիմունքներով հավատարմագրային կառավարմանը հանձնված միջոցներ

☐ Միջին - բաժնետոմսերի, պարտատոմսերի և արժեթղթերի շուկաների վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ

☐ Առաջատար ոչ մասնագիտական փորձ - ներդրումային հարուստ փորձ, կապիտալի շուկայի խորը իմացություն

☐ Մասնագիտական փորձ - ներկայումս կամ անցյալում աշխատել եք որպես արժեթղթերի շուկայի վերլուծաբան, փաթեթի կառավարիչ կամ զբաղվել եք նմանատիպ այլ գործունեությամբ

Նշումներ _____

5. Ունեք բավարար գիտելիքներ, փորձ գնահատելու այն բոլոր ռիսկերը, որոնք առկա են ներդրումներ իրականացնելու ժամանակ

☐ Այո

☐ Այո, սակայն ինձ անհրաժեշտ է որոշակի խորհրդատվություն

☐ Ոչ, ինձ անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն

Նշումներ _____

6. Եթե Դուք ներկայումս ստանում եք եկամուտ ոչ ներդրումային գործունեությունից (աշխատավարձ, թոշակ և այլն), ապա ինչքան երկար եք ակնկալում դրանք ստանալ

☐ Ներկայումս ես չեմ ստանում ոչ ներդրումային և ոչ էլ ոչ-ներդրումային եկամուտ

☐ Ես ստանում եմ ոչ-ներդրումային եկամուտ, բայց չեմ ակնկալում, որ այդ եկամուտը կստանամ __ տարի հետո

☐ Ես ստանում եմ միայն ներդրումային եկամուտ

Նշումներ _____

7. Ձեր ընդհանուր ակտիվների ո՞ր մասն է տեղաբաշխված ներդրումային գործիքներում

☐ 20% և ցածր

☐ 25-50 %

☐ 50% և ավելին

8. Ե՞րբ եք պատրաստվում կատարել մասհանումներ Ձեր հավատարմագրային կառավարման միջոցներից

☐ մեկ եռամսյակից

☐ 6 ամսից մինչև 1 տարվա ընթացքում

☐ 1-3 տարվա ընթացքում

☐ ըստ անհրաժեշտության

☐ նախընտրում եմ ամբողջ գումարը ստանալ պայմանագրով նախատեսված ժամանակաշրջանի վերջում

Նշումներ _____

9. Ինչ նպատակով եք օգտագործելու իրականացված ներդրումներից առաջացած գումարները

☐ Որպես ընթացիկ եկամուտ

☐ Հարստության կուտակման

☐ Բարեգործական

☐ Նպատակային (ուսման վարձ, և այլն)

Նշումներ _____

10. Այլ հավասար պայմաններում ներքոհիշյալներից ո՞րն է ավելի լավ նկարագրում ներդրումներնը ավելացնելու Ձեր նախընտրած մոտեցումը

☐ Միանվագ ներդրում

☐ Հաշվի կանոնակարգված և պարբերաբար համալրում

☐ Հաշվի ոչ կանոնակարգված համալրում՝ ընտրված ներդրումային քաղաքականությամբ կամ ազատ միջոցների գոյացման դեպքում

Նշումներ _____

11. Ո՞ր շուկաներում Դուք կցանկանաք ներդրումներ իրականացնել

☐ Միայն Հայաստանում

☐ Հայաստան և Ռուսաստան

☐ Հայաստան, Ռուսաստան և ԱՄՆ
☐ Այլ _____

12. Ի՞նչ հաճախականությամբ Դուք կցանկանաք վերահսկել Ձեր ներդրումային փաթեթը
☐ ՀԿ պայմանագրով նախատեսված կարգով
☐ շաբաթը մեկ անգամ
☐ ամիսը մեկ անգամ
☐ Այլ _____

13. Ձեր վարվելաձևը, եթե կարճ ժամանակահատվածում (օրինակ մեկ շաբաթվա ընթացքում) ներդրումներից ստացված եկամտաբերությունը լինի 20 % տարեկան
☐ կհանեմ ավելացված մասը
☐ կպահեմ
☐ կհանեմ ամբողջ գումարը
☐ կներդնեմ ավել գումար

Նշումներ _____

14. Ենթադրենք 5 օր անընդմեջ ունենալու եք կորուստներ, որը՞ կլինի կորուստների այն առավելագույն մակարդակը, որը գերազանցելուց հետո կհանեք Ձեր միջոցները կառավարումից:
☐ 5 - 10 %
☐ 10 -15 %
☐ 15 - 50 %
☐ Կպահեմ միջոցները մինչև իրավիճակի փոփոխումը
☐ Կավելացնեմ կառավարվող միջոցները բարենպաստ հեռանկարների ակնկալիքով

15. Ինչքանո՞վ եք կարևորում ներդրումների իրացվելիությունը
☐ Կարևոր՝ կանխիկ մասհանումներ իրականացնելու նկատառումով
☐ Ազդեցիկ, սակայն հասույթը առավել կարևոր է
☐ Կարելի է պահել մինչև մարում, կարևորագույնը հասույթն է
☐ Պարզապես անհրաժեշտ է ցանկացած պահին ներդրումներից մասհանումների հնարավորություն ունենալ

16. Ո՞ր ֆինանսական գործիքներում դուք կցանկանաք ներդրումներ իրականացնել

☐ բաժնային արժեթղթեր
☐ պետական և համայնքային պարտատոմսեր
☐ կորպորատիվ պարտատոմսեր
☐ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիքներ
☐ այլ գործիքներ _____

17. Ինչպիսի՞ տարեկան տոկոսադրույք եք ակնկալում շուկայական գործիքներում ներդրումներից, ռիսկի համարժեք պայմաններում

☐ 10%-ից պակաս
☐ 10-25 %
☐ 25-50%
☐ ավել քան 50%

18. Ինչպիսի տարեկան տոկոսադրույք եք ակնկալում մասնավոր պարտքային գործիքներում ներդրումներից, ռիսկի համարժեք պայմաններում

☐ Չեմ մասնակցի մասնավոր գործառնություններում, անկախ հասույթի մեծությունից
☐ 10%-ից պակաս
☐ 10 - 15%
☐ 15 - 25%
☐ ավել քան 25%

19. Ինչպիսի տարեկան տոկոսադրույք եք ակնկալում ժամանակշրջանի վերջում բաժնետոմսերի վաճառքից, ռիսկի համարժեք պայմաններում

☐ Չեմ իրականացնի ներդրում բաժնետոմսերում, անկախ տոկոսադրույքի մեծությունից
☐ 25 - 50%
☐ 50-100%
☐ ավել քան 100%

Նշումներ _____

20. Նշել կանոնավոր եկամտի աղբյուրները
    ☐ աշխատավարձ
    ☐ եկամուտ ներդրումային գործունեությունից
    ☐ խնայողություններ
    ☐ կենսաթոշակ
    ☐ այլ _____

21. Նշել կանոնավոր տարեկան եկամտի մեծությունը

Նշումներ _____

22. Ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները

Նշումներ _____

23. ֆինանսական ներդրումները և անշարժ գույքի մասին տեղեկություններ

Նշումներ _____

Հաճախորդ՝ _____

(ԱԱՀ, ստորագրություն)

Հավելված 2.

Փրայմ Կապիտալ ՍՊԸ

Ռիսկերի մասին հայտարարագիր

1. Սույն Հայտարարագիրը ներառում է ռիսկերի նկարագրությունը, որոնք կարող են ի հայտ գալ արժեթղթերի շուկայում գործունեության ժամանակ:
2. Հաճախորդը գիտակցում և ընդունում է արժեթղթերի շուկայում գործունեության ընթացքում ներքոնշյալ հնարավոր ռիսկերը, ինչպես նաև այլ ռիսկեր, որոնք կարող են ծագել արժեթղթերում ներդրումների ժամանակ:
3. Սույն Հայտարարագրի իմաստով, արժեթղթերի շուկայում գործունեության ընթացքում "ռիսկեր" հասկացությունը ենթադրում է որոշակի դեպքերի, իրավիճակների կամ գործընթացների ի հայտ գալու հնարավորություն, որոնք հանգեցնում են կամ կարող են բերել Հաճախորդի ակտիվների կորստի:
4. Սույն Հայտարարագրում թվարկված ռիսկերն ամբողջական չեն և չեն բացահայտում արժեթղթերի շուկայում ներդրումների հետ կապված, հավանական ռիսկերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը: Սույն Հայտարարագրի նպատակը Հաճախորդին օգնելն է հասկանալու համար արժեթղթերի շուկայում ներդրումների հետ կապված ռիսկերը, դրանց ընդունելիության աստիճանի և սեփական ֆինանսական հնարավորությունների ու նպատակների իրական գնահատումը:
5. Սույն Հայտարարագրի նպատակն է օգնել Հաճախորդին հնարավորինս ճշգրիտ գնահատել ռիսկերը արժեթղթերի շուկայում ներդրումների ոլորտում և պատասխանատվության բարձր զգացումով մոտենալ ներդրումային ռազմավարության ընտրությանը:
6. Արժեթղթերի շուկայում գործարքները կարող են բերել ֆինանսական կորուստների: Արժեթղթերի շուկայում ներդրումների փորձն ու փորձառությունը կարևոր են, բայց չեն երաշխավորում ապագայում ֆինանսական դրական արդյունքները: Այլ անձանց մոտ ֆինանսական հաջողությունները ևս չեն երաշխավորում նույնպիսի արդյունքներ Հաճախորդի մոտ:
7. Ոչ բավարար ծածկույթով գործարքներով (Margin Trading) գործառնությունների իրականացման ընթացքում գնի և փոխարժեքի համեմատաբար փոքր տատանումներն անգամ կարող են էապես անդրադառնալ Հաճախորդի ներդրումային հաշվի վրա, ինչը պայմանավորված է միջոցների փոխառման լծակի էֆեկտով:
8. Բոլոր ռիսկերի գնահատման և ներդրումային ռազմավարության ընտրության ողջ պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

   Ըստ ներդրողի և ռիսկի աղբյուրի կապի՝
   - անմիջական – ռիսկի աղբյուրն իրավական հարաբերություններով ուղղակիորեն կապված է ներդրողի հետ
   - միջնորդավորված – ռիսկի աղբյուրն իրավական հարաբերություններով անմիջականորեն կապված չէ ներդրողի հետ, սակայն ռիսկի աղբյուրի մոտ անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալն իր ետևից առաջացնում է իրար հաջորդող իրադարձությունների շղթա, որն էլ պատճառ է հանդիսանում ներդրողի միջոցների և/կամ եկամտի կորստի:

   Ըստ ռիսկի գործոնների՝
   - տնտեսական - անբարենպաստ տնտեսական իրադարձությունների ի հայտ գալու ռիսկ: Անհրաժեշտ է նշել հետևյալ տնտեսական ռիսկերը՝

- տոկոսադրույքի, գործընկերոջ կողմից իր պարտականությունների չկատարում և դրա հետ կապված կորուստներ ներդրողի մոտ, օրինակ՝ դեֆոլտ, արժեթղթերի գնորդի անվճարունակությունը, թողարկողի անվճարունակությունը և այլն:
- իրավական փոփոխությունների ռիսկ - արժեթղթերում ներդրումներից հնարավոր կորուստների առաջացում՝ կապված նոր օրենսդրական ակտերի ընդունման կամ էական օրենսդրական ակտերի փոփոխության հետ: Օրենսդրական ռիսկը ներառում է նաև արժեթղթերի շուկայի գործունեությունը կարգավորող իրավական – նորմատիվ ակտերի բացակայությամբ պայմանավորված կորուստների հնարավորությունը:
- սոցիալ-քաղաքական – պետությունում քաղաքական և տնտեսական արմատական փոփոխությունների, սոցիալական անկայունության, ռազմական գործողությունների, ձեռնարկությունների ազգայնացման, հսկվող ձեռնարկությունների և բնական մոնոպոլիաների գործունեությանը պետական միջամտության ռիսկեր:
- քրեական – հակաօրենսդրական գործողությունների հետ կապված ռիսկ, օրինակ՝ խարդախություն, անթույլատրելի մուտք համակարգչային համակարգեր և այլն: Ներդրողի համար այն հանդիսանում է միջնորդավորված ռիսկ:
- գործառնական (տեխնիկական, տեխնոլոգիական, կադրային)– տեղեկատվական, էլեկտրական և այլ համակարգերի անսարքության կամ շուկայի ոչ կատարյալ ենթակառուցվածքով պայմանավորված (այդ թվում գործառնությունների իրականացման տեխնոլոգիաների, կառավարման, հաշվառման և հսկման գործընթացների, կամ անձնակազմի գործողության կամ անգործության) սխալների պատճառով առաջացող ուղղակի կամ անուղղակի կորուստների ռիսկ: Կարելի է առանձնացնել գործառնական ռիսկերի հետևյալ խմբերը՝ տեղեկատվական, էլեկտրական, կոմունիկացիոն համակարգերի օգտագործման, անվանական արժեթղթերի հաշվառման համակարգի հետ կապված ռիսկեր:
- տեխնոգեն – մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացող ռիսկեր՝ վթարներ, հրդեհներ և այլն:
- բնական – ռիսկ, որը կախված չէ մարդու գործունեությունից, օրինակ՝ տարերային աղետներ (երկրաշարժ, ջրհեղեղ, պետության կողմից կիրառված արտակարգ դրություն և այլն):

Ես կարդացել և հասկացել եմ արժեթղթերով գործառնությունների հետ կապված ռիսկերի մասին հայտարարագիրը, լսել և ընկալել եմ ռիսկերի բոլոր տեսակների մասին բերված բանավոր օրինակներն ու առավել մանրամասն բացատրությունները: Ես գիտակցում եմ Ակտիվների հավատարմագրային կառավարման հանձնման հետ կապված իրական ռիսկերը և ընդունում եմ դրանք:

Կառավարման Հիմնադիր՝ _____

Հավելված 3.

Փրայմ Կապիտալ ՍՊԸ

Հայտարարագիր

Ֆինանսական միջոցների ծագման վերաբերյալ

Իրավաբանական անձանց դեպքում

Անուն Ազգանուն Կազմակերպությունը		Պաշտոնը	

Մուտքագրված միջոցների ծագման աղբյուր
Ավելցուկային իրացվելիություն

Ֆիզիկական անձանց դեպքում

Ազգանուն		Անձնագրի No	
Անուն		Տրման ամսաթիվ	
Հայրանուն		Ում կողմից	

Մուտքագրված միջոցների ծագման աղբյուր

Հաստատում եմ, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք մուտքագրվել են "Փրայմ Կապիտալ" ՍՊԸ–ի հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և որևէ կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Ստորագրությունը և կնիքը

Անուն Ազգանուն	Ստորագրություն	Ամսաթիվ

Կնիք

Լրացվում է Ընկերության կողմից

Հաստատված է՝
Աշխատակից՝

Անուն Ազգանուն	Ստորագրություն	Ամսաթիվ

Անհրաժեշտության դեպքում

Հաստատված է՝
Տնօրեն՝

Անուն Ազգանուն	Ստորագրություն	Ամսաթիվ

Հավելված 4.

Փրայմ Կապիտալ ՍՊԸ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ներդրումային Հայտարարագիրը սահմանում է Հավատարմագրային կառավարչին Հավատարմագրային կառավարման հանձնված Կառավարման հիմնադրի ակտիվների ներդրման նպատակը և դրանց ներդրումային պորտֆելի կառուցվածքը:

1. *Ներդրման նպատակը*

1.1 _____

2. *Ներդրման օբյեկտները*

Կառավարիչը իրեն Հավատարմագրային կառավարման հանձնված Կառավարման հիմնադրի ակտիվները կարող է ներդնել հետևյալ ֆինանսական ակտիվներում՝

2.1. _____

3. *Ակտիվների կառուցվածքը*

3.1. 2-րդ կետում նշված ակտիվների ժամկետայնություն՝ _____

3.2. Մեկ գործիքի տեսակարար կշիռը հավատարմագրային կառավարման արդյունքում ձևավորված փաթեթում կարող է կազմել _____%:

4. *Այլ դրույթներ*

4.1. Այն դեպքում, երբ ակտիվների շուկայական գնի փոփոխությունը հանգեցնում է Հավատարմագրային կառավարման պայմանների անհամապատասխանության, ապա Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է ակտիվների կառուցվածքը համապատասխանեցնել նշվածին առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

4.2. Արժեթղթերի շուկայական արժեքի գնահատումը կատարվում է Հայաստանի Հանրապետության դրամով: Արտարժույթով գնանշվող արժեթղթերի շուկայական արժեքը

որոշվում է գնահատման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված միջին փոխարժեքով: ՀՀ պետական պարտատոմսերի, այդ թվում՝ Եվրոպարտատոմսերի արժեքի գնահատման համար հիմք է ընդունվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված եկամտաբերության կորերին ավելացրած 0.5 տոկոս, իսկ ՀՀ կորպորատիվ պարտատոմսերի գնահատման համար հիմք է ընդունվում Հայաստանի ֆոնդային բորսայում գնահատման օրը տվյալ արժեթղթի փակման գինը, իսկ դրա բացակայության դեպքում՝ առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականը:

5. Իմաստալից հենանիշ

Ընտրվում է համաձայն սույն կանոնակարգի 3.6. կետի:

6. Ֆինանսական լծակ

Ֆինանսական լծակի առավելագույն չափ է սահմանվում.

- Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների համար՝ 1/5
- Պրոֆեսիոնալ հաճախորդների համար՝ 1/20:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաավատարմագրային Կառավարիչ	**Կառավարման հիմնադիր**
_____	_____
_____	_____
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5.

Փրայմ Կապիտալ ՍՊԸ

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ/ՀԱՆՁՆՄԱՆ ԱԿՏ

Կառավարման հիմնադրի անհատական համարը՝ _____

Կառավարման հիմնադիր՝ _____

Համաձայն _____-ի՝ _____ԱԱՀ_____ հանձնում է, իսկ Կառավարիչը՝ գործելով Ընկերության Կանոնադրության և ներքին իրավական այլ ակտերի հիման վրա, ի դեմս _____ ընդունում է հետևյալ Ակտիվները.

1. արժեթղթեր ձեռք բերելու համար դրամական միջոցներ՝ _____ՀՀ դրամի չափով;
2. արժեթղթեր՝

N	Թողարկող	Տիպը	Պետ. ռեգիստրի #	Քանակը	Շուկայական արժեքը	Հաշվեկշռային արժեքը

3. այլ

Ընդհանուր հաշվեկշռային արժեքը դրամով՝ _____ ՀՀ դրամ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառավարիչ	**Կառավարման հիմնադիր**
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 6.

Փրայմ Կապիտալ ՍՊԸ

Հավատարմագրային կառավարման սակագներ

Հավատարմագրային կառավարիչը գանձում է Ընթացիկ կառավարման վարձ և Պարգևավճար:

1. Ընթացիկ կառավարման վարձը հաշվարկվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին և (կամ) Պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, Գույքի զուտ ակտիվների արժեքի տարեկան 1%-ի չափով:
2. Պարգևավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր Հաշվետու ժամանակաշրջանի վերջին և (կամ) Պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, հետևյալ բանաձևով՝

Պ = (ԳԶԱ -ԳԲԱ – (ԼՀԳ - ՀՎԳ – ՎՊ)) xY%,

որտեղ՝

Պ – Պարգևավճարն է,

ԳԶԱ - Գույքի Զուտ Արժեքն է պարգևավճարի հաշվարկման ժամանակաշրջանի վերջին և (կամ) Պայմանագրի դադարեցման օրվա համար,

ԳԲԱ - Գույքի Բազիսային Արժեքն է,

ԼՀԳ - պարգևավճարի հաշվարկման ժամանակաշրջանի ընթացքում, Կառավարման հիմնադրի կողմից կառավարմանը լրացուցիչ հանձնված գույքի արժեք,

ՀՎԳ - պարգևավճարի հաշվարկման ժամանակաշրջանի ընթացքում, Կառավարման հիմնադրի կողմից հետ վերցրած գույքի արժեք,

ՎՊ – վերջին գանձված Պարգևավճար:

Y – գանձվում է՝

- Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների համար՝ 25%
- Պրոֆեսիոնալ հաճախորդների համար՝ 10%:

Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում հավատարմագրային կառավարման հանձնված ակտիվների առաջնային մուտքի նվազագույն չափը սահմանվում է 10 000 000 (Տաս միլիոն) ՀՀ դրամ, իսկ պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում՝ 50 000 000 (Հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

Ընթացիկ կառավարման վարձը և Պարգևավճարը հաշվարկվում և գանձվում են Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից կամ Պայմանագրի դադարեցումից հետո 15 օրվա ընթացքում:

Գույքի Զուտ Արժեքը հավատարմագային կառավարմանը հանձնելու օրվանից բացի որևէ այլ օրվա դրությամբ հաշվարկված Գույքի արժեքի (Կառավարման հիմնադրի համախառն ակտիվների) և Պարտավորությունների (ներառյալ Ընթացիկ Կառավարման վարձ) տարբերությունն է: Գույքի Բազիսային Արժեքը դա այն Գույքի Զուտ Արժեքն է, որի արդյունքում իրականացվել է պարգևավճարի ամենավերջին գանձումը, նոր Կառավարման հիմնադրի համար սկզբնական ԳԲԱ-ն դա հավատարմագրային կառավարման հանձնված ակտիվների առաջնային մուտքն է՝ համաձայն Ընդունման/Հանձնման ակտի:

Գույքի արժեքների հաշվարկներում ընդգրկված ակտիվները արտահայտված են ՀՀ դրամով: Արտարժույթով արտահայտված ակտիվները հաշվարկին մասնակցում են ՀՀ կենտրանական բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված միջին փոխարժեքներին համարժեք: